# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Ծաղկունք, (0261)61104, (098)461103, tsaghkunq.gegharquniq@mta.gov.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ապրիլի 2014թվականի N 16-Ա

## ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 67-րդ, 68-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով 2014թվականի ապրիլի 28-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունքի գյուղապետարանի վարչական շենքում տեղի ունեցած N1 լոտի աճուրդի արդյունքները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի սեփականություն համարվող բնակավայրի, 4-րդ փողոց 12/1 հասցեի, հասարակական կառուցապատման `05-047-0012-0007 ծածկագիր կոդով, ընդհանուրը ` 0.0376 / զրո ամբողջ զրո երեք հարյուր յոթանասուն վեց / հա գործառնական նշանակության հողամասը` 87232 / ութանասուն յոթ հազար երկու հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամով վաճառել Կարեն Հայկի Աղաջանյանին:

2. Զգուշացնել Կարեն Հայկի Աղաջանյանին, որ մինչև 07.05.2014թիվը անհրաժեշտ է վճարել N1 լոտի ամբողջ գումարը /հաշվանցած արդեն մուծված նախավճարը/ և կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՊԵՏԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

2014 թ. ապրիլի 28
գ.Ծաղկունք